

ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊ

ԱՍՈՒՄՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ
ՀԻՆԳ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Վերջերս թերթում պատահաբար կարդացի ամուսնությունների և ամուսնալուծությունների վիճակագրությունը: Սարսափելի պատկեր էր պարզվում է, որ ամուսնացած երեք զույգերից առնվազն երկուսը բաժանվում են: Ցավոք, բաժանման պատճառների մասին ոչ մի տեղեկություն չկար: Հեղափոխություն է իմանալ, որն է ամուսնալուծության հիմնական պատճառը:



Ս.Վարդանյան

ԹՐԻԽՍԻ

Ցավոք, իրականությունը իրոք այդպիսին է, իսկ ինչ վերաբերում է ամուսնալուծության պատճառներին, ապա ձեռք ենք ներկայացնում գիտականորեն հիմնավորված այն պատճառները, որոնք դրվում են բաժանման հիմքում:

1. Ամուսնալուծության կարևորագույն պատճառներից մեկը, որքան էլ տարօրինակ է, արագ ամուսնություններն են

Սեռական հարաբերությունների մատչելիությունը, որում շատերը հարմարավետություն են փնտրում եւ գտնում, հարաբերությունների հիմքն են համարում: Ցավոք, դա շատ զույգերի թույլ չի տալիս լավ ճանաչել միմյանց, էլ չենք խոսում հոգեւոր մերժեցման մասին, առանց որի ընտանիք կազմել անհնար է:

2. Տարբեր ուղորտներում գործունեության հնարավորությունը բացասական արձագանք է գտնում զուգընկերների անձնական կյանքում

Եթե ընտանիքում միայն մեկն է կարողանում իրացնել ուժերը, զույգը բաժանվում է, քանի որ իրիզոններն արդեն

տարբեր են լինում: Ընտանիքը մեկ ամբողջություն է:

3. Ֆեմինիստական շարժումները, ցավոք, ազդել են հարաբերությունների զարգացման բնական մեխանիզմների վրա

Որսորդ-տղամարդը գենետիկա է, որը դժվար է անտեսել: Տղամարդու կապվածությունը ձեռավորվում է այնտեղ, ուր նա «որս է բերում»: Այսօր ընտանիքներում տարբեր բյուջեները, հաշվի առնելով աճող անվտանգությունը, հաճախ ամուսնալուծության պատճառ են դառնում:

4. Դասական պատճառները նույնպես արդիական են


Դավաճանություն: Ընդ որում, հաճախ դավաճանում են տղամարդիկ, բայց ապահարգան են պահանջում կանայք: Զգացմունքայինությունը նրանց չի խանգարում պատասխանատվություն վերցնել նման կարելու որոշման համար:

5. Հաճախ ամուսնալուծության քայլի է մղում «ես լավագույնս եմ արժանի» կարծիքը

Արժեզրկումն այն ամենի, ինչ մարդիկ ունեն, նույնպես ուղղակիորեն ազդում է ընտանիքի վրա:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

ՄԻԹԵ ՀԻՄԱ ԷԼ ՄԱՅԱՊԱՏԻԺՆԵՐԸ
ԿԻՐԱՐԿՎՈՒՄ ԵՆ



Թուրքիայում անցկացված հանրաքվեից անմիջապես հետո՝ նախագահ Էրդողանը հայտարարեց, որ եւս մի հանրաքվե է անցկացվելու՝ երկրում մահապատիժ վերականգնելու հարցով:

Հեղափոխություն է միթե դեռեւս կան երկրներ, որտեղ մահապատիժը կիրարկվում է:

Տ.Պետրոսյան

ԲՈՒՆԻՍԻ

Ցավոք, դեռեւս շատ են այն երկրները, որտեղ մահապատիժը կիրարկվում է, թեպետ հարկ է նշել, որ դրանք թիվը նկատելիորեն նվազել է: Մասնավորապես, 2016 թվականին աշխարհում մահապատիժների թիվը 2015 թվականի համեմատությամբ ընկել է 37 տոկոսով:

Անցյալ տարի ի կատար է ածվել 1032 մահապատիժ՝ այն դեպքում, երբ մեկ տարի առաջ մահապատիժի էր ենթարկվել 1634 մարդ: Մահապատիժների թվի նվազումը տեղի է ունեցել նախեւառաջ Իրանի եւ Պակիստանի հաշվին:

Հաշվարկներ կատարելիս՝ հաշվի չեն առնվել մահապատիժները Չինաստանում, քանի որ այդ երկրի վերաբերյալ ստույգ տվյալները բացակայում են: Ենթադրվում է, որ Չժ՝ ունի ավելի շատ մարդիկ են մահապատիժ ենթարկվել, քան մնացած բոլոր երկրներում միասին վերցրած:


2006 թվականից ի վեր, առաջին անգամ առավել մեծ թվով մահապատիժներ իրականացրած երկրների հնգյակում, տեղ չի գտել ԱՄՆ-ը: Այժմ այդ ցուցանիշով երկրների ցուցակը գլխավորում են Չինաստանը, Իրանը (567 մահապատիժ), Սաուդյան Արաբիան (154), Իրաքը (88), Պակիստանը (87 մահապատիժ):

Եվրոպայում եւ Կենտրոնական Ասիայում մահապատիժը գործում է միայն երկու երկրում՝ Բելառուսում եւ Ղազախստանում: Ներկայում մահապատիժները չեղարկված են 104 երկրներում: Համեմատության համար նշենք, որ 1997 թվականին նման երկրները 64-ն էին, հաղորդել է BBC-ն:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ԾԽԵԼՆ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է
ԾԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎՈՒՄ Է ՏՈՒԳԱՆՔ

Lancet հանդեսում հրապարակված հոդվածում տեղեկատվություն է ներկայացվել՝ աշխարհի երկրներում ծխախոտից օգտվողների թվաքանակության վերաբերյալ: Այդ տեղեկատվությամբ՝ Կրասնոսնովսկի մարզում է ծխում 18 տոկոսը, ինչը կազմում է բնակչության 40 տոկոսը: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա այն, ծխող տղամարդկանց թվաքանակով, առաջատարներից մեկն է Կիրիբատիից, Ինդոնեզիայից, Լաոսից եւ Մարիանյան կղզիներից հետո:

Ինչպես հայտարարեց Վրաստանի ժխախոտի վերահսկողության կազմակերպության նախագահ Գիորգի Բախուտաձեն, այդ առումով երկրում աղետալի իրավիճակ է, ուստի օրենքով պատժամիջոցները պետք է խստացվեն: Նրա խոսքով, ֆիզիկական անձանց նկատմամբ ծխախոտեղենի վերահսկողությունը համեմարվում է ուստիկանությանը, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությանը: Անթույլատրելի վայրերում ծխելու համար՝ ֆիզիկական անձանց տուգանքը կսկսվի 50 լարիից: Իրավախախտման կրկնության դեպքում՝ պատժազուցարը կրկնապատկվում է: Իրավաբանական անձանց համար՝ նվազագույն տուգանքը կկազմի 500 լարի: Այս դեպքում էլ, իրավախախտման կրկնության դեպքում, տուգանքը կկրկնապատկվի: Եթե պատժամիջոցները գերազանցեն 2 հազար լարին, ապա հարցի կարգավորումը կիրականացվի դատարանում:



Իրավաբանական անձանց համար՝ առավելագույն պատժազուցարը կկազմի 10 հազար լարի:

Վրաստանի խորհրդարանը, առաջին ընթերցմամբ, քննարկեց ծխախոտի վերահսկողության օրենքում փոփոխությունների փաթեթը, ըստ որի՝ ծխելն արգելվում է բոլոր տեսակի շինություններում, բացի բնակելի տներից ու արգելավայրերից:

Ինչպես հայտարարեցին ալյանսի անդամները, կարգելվի


նաեւ ծխախոտեղենի գովազդումը (այդ թվում՝ ցուցափեղկերում եւ առեւտրական օբյեկտների ներսում), ծխախոտեղենի ժողովրդականացումն ու նպաստավորումը: Բժշկական զգուշացման չափը 30-ից կհասցվի 65 տոկոսի, տուգանման կարգը կդրսևացվի եւ պատժամիջոցների ցանկը կավելացվի:



Վրաստանի խորհրդարանի առողջապահության կոմիտեի նախագահի հայտարարությամբ, շենքերում ծխելը կարգելվի 2018 թվականի մայիսից, իսկ 2020 թվականից այն կարգելվի մարզադահլարակներում, նման բաց տարածքներում եւ դա կառնչվի նաեւ գովազդային շուկային: Ինչպես պարզաբանեց կոմիտեի նախագահ Ակակի Ջոիձեն, շենքում ծխելու փաստի վավերացման դեպքում, իրավաբանական անձը նախ՝ կտուգանվի 500 լարիով, փաստի կրկնության դեպքում՝ 2000 լարիով, իսկ պարբերական խախտման դեպքում՝ 5000 լարիով:

Ինչպես նշեց ծխախոտի վերահսկողության ալյանսի նախագահը, ծխախոտի վերահսկողության մասին օրենքը չի նախատեսում փողոցում ծխելու արգելում: Ինչպես հայտարարեցին ալյանսի անդամները, կարգելվի

Գիտնականների հաշվարկների համաձայն, 2015 թվականին աշխարհում ծխողների թիվը կազմում էր 933 միլիոն, եւ ներկայումս նրանց թվաքանակը, եթե նրանց աճի արագությունը չի փոխվել, պետք է գերազանցի 1 միլիարդը՝ ի հաշիվ աշխարհի ամենաբույլ զարգացած երկրներում ծխողների թվաքանակի արագ աճի: Եթե այդ թրեդները շարունակվեն, ապա այս հարյուրամյակի ընթացքում ծխելը շուրջ 1 մլրդ մարդու կսպանի աշխարհի բոլոր երկրներում:



Ծխողների մեծ մասն ապրում է ասիական երկրներում. այդ հաշվառելիքից «մեծ եռյակը» կազմում են Չինաստանը, Հնդկաստանը եւ Ինդոնեզիան, որտեղ գրեթե 400 մլն տղամարդ կանոնավոր կերպով ծխում է: Ծխող կանայք առավել մեծ թիվ են կազմում ԱՄՆ-ում, Չինաստանում եւ Հնդկաստանում, որտեղ թույլ սեռի 13-17 մլն ներկայացուցչուհիներ կանոնավոր կերպով կան պարբերաբար ծխախոտ են օգտագործում:

Այն երկրների հնգյակում, որտեղ ծխախոտն առավել մեծ թվով կյանքեր է խլել, տեղ են գրադեցնում Չինաստանը, Հնդկաստանը, ԱՄՆ-ը, Ռուսաստանը եւ Ինդոնեզիան: Այդ երկրներում ամեն տարի, ծխելու հետեւանքով, մահանում է 200-800 հազար մարդ, իսկ Չինաստանում այդ ցուցանիշը հասնում է 1,8 միլիոնի: Ընդհանուր առմամբ, նրանց է բաժին ընկնում ամբողջ մոլորակում ծխելու հետեւանքով մահվան դեպքերի մոտավորապես կեսը:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏԵՐ

Ամբողջ մարմնի կենդանությունը հոգին է, իսկ մարմինն ու հոգին կառավարողը միտքն է:

ԵՂԻՇԵ

V դար

Հայ պատմիչ

Կմոխրացնի ծառն էլ իսկա՝ կայծը չնչին ու աննշան:

ՇՈՐԱ ՌՈՒՍՅԱՆԵԼԻ

(1172-1216)

Վրաց բանաստեղծ

Ոչ ոք չի զգում, թե ինչպես է անցնում երիտասարդությունը, բայց ամեն մեկն զգում է, երբ արդեն անցել է:

ՍԵՆԵԿԱ

(մ.թ.ա.4-65)


Հռոմեացի փիլիսոփա

Ամուսնացիր, ինչ էլ որ լինի: Եթե լավ կին հանդիպի, կլինես բացառություն, իսկ եթե վատը՝ կխառնաս փիլիսոփա:

ՍՈՒՐԱՍԵՆ

(մ.թ.ա.469-399)

Հույն փիլիսոփա



☺ Ամերիկյան ընտանեկան իրավիճակ:

Կինը տագնապալի ազդեցություն է դիմելով ամուսնուն:

- Չո՛ւն, այստե՛ղ արի, օգնի՛ր ինձ. իմ երեխաներն ու քո երեխաները ծեծում են մեր երեխաներին:

☺ Հանդիպում են երկու ընկերուհի.

- Դու արդեն հինգ

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

տարուց ավելի է նշանված ես այդ տղայի հետ, ինչո՞ւ չես ամուսնանում:

☺ Կինը՝ - Չախ ձեռքիս ափը քոր է գալիս, երեւի գու-

մար ունեմ ստանալու... Ամուսինը՝ - Չե՛մ տա:

☺ Ուրեմն՝ մեկն կզանգե տաքսի սերվիս, թե հըբը տաքսի էի պատվիրել, օր նորմալ ժամին օդանավակայան եղին, տերները մեռնի, ավտոն չկա: Ես գաբախկված տաքսի ծա-

ռայությունից կպատասխանեմ.

- Հազար անգամ կներեք, մեքենան ուշացրել ենք, բայց թե հանգիստ մնացեք, ինչխ էլ եղին, ինքնաթիռը ուշացում կտա, կհասցնեք թոնել:

- Հեքիաթ մի պատմեմ ընձի, ինքնաթիռը հաստատ ուշացում է տալու, ես օդաչուն եմ:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՅԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆԱՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

«ԱԶԳ-ԲԱՆԱԿ-2017» ՀԱՄԱԺՈՂՈՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ



Համաժողովին մասնակցում են պաշտպանական եւ կրթական գերատեսչությունների պատասխանատուներ, հանրակրթական եւ բարձրագույն ուսումնական հաստատությունների ղեկավարներ, ուսուցիչներ, դասախոսներ, գինդեկեր, գիտական կենտրոնների, ՀՀ-ների ներկայացուցիչներ: Համաժողովի շրջանակում անցկացվեց հազեցված մրցութային ծրագիր, սահմանվեցին հատուկ մրցանակներ հաղթողներ:

Ապրիլի 20-ին, Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում, մեկնարկեց «Ազգ-բանակ-2017» խորագրով համաժողովը՝ նվիրված ռազմակրթական ոլորտի հիմնախնդիրներին: Համաժողովը կազմակերպել են Հայաստանի պաշտպանության նախարարությունը եւ Կրթության եւ գիտության նախարարությունը:

րի համար: Անցկացվեցին հանդիպումներ Արցախյան ազատամարտի վետերանների ու ապրիլյան մարտական գործողությունների մասնակիցների հետ: Համաժողովի ընթացքում անցկացվեցին քննարկումներ «Ռազմական կրթության հնարավորություններն ու հեռանկարները Հայաստանում», «Ազգ-բանակ. Անվտանգության բանաձեւ» թեմաներով:

Միջոցառման ընթացքում կազմակերպվեց նաեւ «Կյանք ու կռիվ» գեղարվեստական ֆիլմի ցուցադրություն: «Ազգ-բանակ-2017» համաժողովի շրջանակում, Մարզահամերգային համալիրի տարածքում, ապրիլի 21-ից 23-

ը գործում է ցուցահանդես, որտեղ կրթական ոլորտի մի շարք առաջատար հաստատություններ ներկայացնում են իրենց ուսումնական պայմանները, արձանագրած հաջողությունները եւ կրթական ծրագրերը: Առանձին հարթակներում եւ տաղավարներում ներկայացված են սպառազինության եւ ռազմական տեխնիկայի նմուշներ, Հայաստանի ռազմարդյունաբերական համալիրի արտադրատեսակներ:

Համաժողովի մեկնարկին ելույթ ունեցան Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը եւ Հայաստանի պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐՅԱԽԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ՄԱՅԻ ԱՅՈՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻՍՏՆՈՒՄ



Ապրիլի 16-ին, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը եւ տիկին Ռիդա Սարգսյանը, Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ներկա են գտնվել Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության Սուրբ Զատիկի տոնի առթիվ մատուցված Հայրապետական Սուրբ Պատարագին:

Իսկ նախօրյակին՝ ապրիլի 15-ի երեկոյան, Սերժ Սարգսյանը Երեւանի Սուրբ Սարգիս եկեղեցում ներկա է գտնվել Ճրագալույցի Սուրբ Պատարագին: Հընթացս Սուրբ Պատարագի՝ Տեր հայրն ընթերցել է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի շնորհավորական ուղերձը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՇՈՒՐՈՒՄ ԵՄՏՆՈՒՄ ՆՈՐ ՎՈՈՒԹՅՈՒՆԵՐ

Հունիսի 1-ից, շաբաթը 3 անգամ, Ստամբուլի «Ջվարթնոյ» միջազգային օդանավակայան թռիչքներ կիրականացնի «Պեգասուս» ավիաընկերությունը: Թռիչքները կիրականացվեն երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին: Այս մասին տեղեկացրին «Արմենիա» միջազգային օդանավակայանները ՓԲԸ-ից: Այս ավիաընկերությունը Ստամբուլից միջազգային թռիչքներ է իրականացնում գրեթե բոլոր եվրոպական երկրներ: «Պեգասուսը» տարածաշրջանի ամենաակտիվ «լոգիստիկայի» մեկն է:

ՏԱՐԱԳՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(21 ապրիլի)
Հայաստանի Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի փոխանակման հետեւյալ կուրսը:

ՏԱՐԱԳՐԱՄ	ԱՌԸ	ՎԱՃԱՌԸ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	482,70	485,30
ԵՎՐՈ	516,00	522,00
ՌՈՒՔԼԻ	8,48	8,69

Ապրիլի 13-ի համեմատությամբ, ԱՄՆ դոլարի կուրսը նվազել է 1,8 դրամով:

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ. «ԵՌԱՄՍՅԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԳՈՐԱՑՈՒՑԻՉ ԵՆ, ՍԱԿԱՅՆ՝ ՈՉ ԲԱՎԱՐԱՐ»

Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանը գոհացուցիչ է համարում 2017 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում արձանագրված տնտեսական ցուցանիշները՝ միաժամանակ նշելով, որ դրանք բավարար չեն:

«Այսօր հրապարակվեցին ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները: Կարելի է փաստել, որ ՀՀ տնտեսության մի քանի կարեւոր ուղղություններով ունենք աճ: Մասնավորապես, 2017 թվականի առաջին եռամսյակի արդյունաբերական արտադրանքի ծավալները, 2016 թվա-

կանի նույն հաշվետու ժամանակաշրջանի համեմատ, կազմել են 116,1%: Նման ցուցանիշները գոհացուցիչ են, սակայն բավարար չեն, եւ այդ ուղղությամբ մեր թիմը դեռ ահռելի աշխատանք ունի կատարելու»,- նշեց Կարեն Կարապետյանը:

Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած մակրո-տնտեսական ցուցա-

նիշների արդյունքներով, Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը՝ 2017 թվականի հունվար-մարտին, 6,6 տոկոսով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Շինարարության ծավալը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 13,6 տոկոսով: Էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում 2017 թվականի հունվար-մարտին, ցուցանիշը 9,3 տոկոսով ավելացել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համե-

մատ: 2016թ. հունվար-մարտի համեմատ, ընթացիկ տարում ծառայությունների ծավալը (առանց առեւտրի) աճել է 10 տոկոսով՝ կազմելով 301 մլրդ 945,1 մլն դրամ, իսկ գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը նվազել է 1,5 տոկոսով՝ կազմելով 69 մլրդ 505,4 մլն դրամ:

Սպառողական գների ինդեքսը, 2017 թվականի հունվար-մարտին, նվազել է 0,3 տոկոսով, իսկ արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսն ավելացել է 3,4 տոկոսով:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՍՓՅՈՒՌԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ապրիլի 14-ին, Հայաստանի սփյուռքի նախարար Զրանուշ Հակոբյանը հանդիպեց 2017թ. ՀՀ սփյուռքի նախարարությունում իրենց պրակտիկան անցկացրած ուսանողների հետ:

Ներկայացնելով Սփյուռքի հետ տարվող աշխատանքները՝ նախարար Զրանուշ Հակոբյանը ընդգծեց, որ նախարարության հիմնական նպատակներն են հայապահպանությունը, Սփյուռքի ներուժի օգտագործումը Հայաստանի զարգացման գործում, եւ՝ հայրենադարձությանը նպաստող ծրագրերի իրականացումը:

Այնուհետեւ ՀՀ սփյուռքի նախա-

րարը լսեց հանդիպմանը ներկա բոլոր պրակտիկանտներին: Նրանցից յուրաքանչյուրը ներկայացրեց իր կարծիքը՝ նախարարությունում անցկացված պրակտիկայի վերաբերյալ:

Բոլոր պրակտիկանտներն ընդգծեցին, որ, նախարարության կառուցվածքային ստորաբաժանումներում, տիրում է առողջ աշխատանքային մթնոլորտ, ինչի արդյունքում իրենք արագ



ինտեգրվել են աշխատակազմին եւ յուրացրել անհրաժեշտ գիտելիքները:

Հանդիպման ավարտին՝ ուսանողներն իրենց հուզող հարցերն ուղղեցին ՀՀ սփյուռքի նախարարին եւ ստացան սպառիչ պատասխաններ:

ՀԱՇՎԱՌՎԵԼ Է 96,2 ՀԱԶԱՐ ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՐՈՂ

Հայաստանում, 2017 թվականի մարտի 1-ի դրությամբ, Զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոններում հաշվառված աշխատանք փնտրողների թիվը կազմել է 96.2 հազար մարդ, որոնցից 62.3 հազարը կանայք են, 22.3 հազարը՝ երիտասարդներ:

Ինչպես տեղեկացրին Հայաստանի աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական գործակալության հասարակայնության հետ կապերի բաժնից, տարածքային կենտրոնների կողմից հավաքագրվել է 1328 թափուր աշխատատեղ, կենտրոնների աջակցությամբ աշխատանքի է տեղավորվել 1159 աշխատանք փնտրող: Շուրջ 950 անձ ընդգրկված են 2016թ. Զբաղվածության պետական կարգավորման ծրագրի շրջանակներում իրականացված եւ դեռեւս շարունակվող ծրագրերում: 2017թ. Զբաղվածության կար-

գավորման պետական ծրագրի շրջանակներում 1-ին եռամսյակում՝ իրականացված «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում» ծրագրում, ընդգրկվել է 264 անձ: Ծրագրի նպատակն է աշխատաշուկայում անմրցունակ անձանց հնարավորություն ընձեռել աշխատավայրում ձեռք բերել աշխատանքային ունակություններ եւ կարողություններ՝ այդպիսով ապահովելով նրանց կայուն զբաղվածությունը: Ծրագրում ընդգրկված անձինք աշխատանքի են ընդունվել

տնտեսության տարբեր ոլորտներում՝ որպես փոխտնօրեն (ֆինանսական գործառնությունների գծով), վիճակագիր (առողջապահության բնագավառում), մեներգ (արտադրության, սպասարկման ոլորտներում), իրավաբան, տնտեսագետ, համայնքային սոցիալական ծառայող, ատամնաբույժ, բուժքույր (ատամնաբուժարանում), դեղագործ, խմբավար (նվագախմբում), հաշվետար, ճարտարագետ, գանձապահ, գործավար, օպերատոր (համակարգչային), հրուշակագործ, մատուցող, հացթուխ, կարկանդակ պատրաստող, դայակ, դաստիարակ, վաճառող, վարսահարդար, մատնահարդար...:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների եւ կարողությունների ձեռքբերման նպատակով՝ ծրագրում ընդգրկված մեկ

անձի համար գործատուին տրամադրվել է միանվագ փոխհատուցման գումար՝ 200.000 ՀՀ դրամի չափով: Ծրագրի առավելագույն տեւողությունը 1 տարի է, սեզոնային աշխատանքի դեպքում՝ առնվազն 12 ամիս: 2017թ. ավելացել են առանձին ծրագրերում ընդգրկման ենթակա շահառուների թիվը եւ դրանց իրականացման ուղղված ֆինանսական միջոցների չափը: Այսպես՝ «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում» ծրագրի համար, 2017թ. համար պլանավորված 751 շահառուի փոխարեն, նախատեսվում է ծրագրում ընդգրկել 4500 շահառուի, իսկ «Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու



համար գործազուրկներին աջակցության տրամադրում» ծրագրում նախատեսված 477-ի փոխարեն՝ առաջին անգամ աշխատաշուկայ մտնող 1200 երիտասարդի: Կատարված փոփոխությունների նպատակը՝ սահմանափակ ռեսուրսներով հնարավորինս մեծ թվով անձանց կայուն զբաղվածության եւ առաջին անգամ աշխատաշուկայ մուտք գործող երիտասարդին աշխատանքային փորձ ձեռք բերելու հնարավորությունների ապահովումն է:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԱՊՐԻԼ

22.04.2017. Սուրբ Հովհաննես Մկրտչի գլխատման հիշատակության օր

23.04.2017. Կրկնագատիկ (Նոր կիրակի)

Կրկնագատիկ է կոչվում երեք պատճառներով:

Ջատիկ նշանակում է ազատություն, եւ այդ օրը կրկնակի ազատության օր է: Կրկնագատիկ է կոչվում մեր հարուստ պատճառով: Քրիստոս, առաջին կիրակի օրը, մեզ հարություն տվեց Իր հոգով ու զորությամբ, իսկ երկրորդ կիրակի օրը մեզ հարություն է տալու ըստ մարմնի եւ, մեռելներից հարություն առնելով, պիտի անմահանանք: Նոր կիրակի եւ Կրկնագատիկ է կոչվում, քանզի նորովի ենք տոնում մեր հոգու փրկության նավակատիքը՝ հոգեւոր ուրախությամբ ու տոնախմբությամբ:

ՏԱՐԵԼԻՑ

«ԱԼԻՔ ՄԵՂԻԱՆ»՝ ԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ

Թբիլիսիում գործող հայալեզու «Ալիք Մեղիան» ապրիլի 20-ին նշեց իր հիմնադրման երկրորդ տարեդարձը: Գործելով առցանց տարածքում, «Ալիք»-ը լուսաբանում է Վրաստանում տեղի ունեցող քաղաքական, տնտեսական եւ մշակութային իրադարձությունները, համայնքային միջոցառումները:



Իր երկամյա գործունեության ընթացքում, «Ալիք Մեղիան» հասցրել է իր ուրույն տեղը գտնել վրաստանյան մեդիա տարածքում:

«Ալիք»-ի ռադիոնյութերը 1 տարուց ավելի է, ինչ հասանելի է նաեւ Ջավախքի բնակչությանը՝ FM տիրույթում՝ Նինոծմինդայի համայնքային ռադիո «ՆՈՐ»-ի հետ համագործակցության արդյունքում: Համագործակցության եզրեր կան վրաստանյան լրատվամիջոցների հետ: Ակտիվորեն զարգանում է նաեւ «Ալիք»-ի վրացալեզու հատվածը:

«Ծննդյան» արարողությանը, բազմաթիվ հյուրերի ներկայությամբ, որոնց թվում էին Վրաստանում ծանաչված քաղաքական եւ հասարակական գործիչներ, լրագրողներ, ելույթ ունեցան «Ալիք Մեղիայի» հիմնադիր եւ տնօրեն Արսեն Խարատյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

«Վրաստան» թերթը շնորհավորում է «Ալիք Մեղիային» փոքրիկ հորելյանի առթիվ, մաղթում՝ երկարակեցություն եւ արդյունավետ գործունեություն վրաց տեղեկատվական հարթակում:

ԱՊՐԻԼԻ 14-Ը՝ ՎՐԱՑ ԼԵԶՎԻ ՕՐ

ՄԵԾ ՄԵՐ՝ ՎՐԱՑ ԼԵԶՎԻ ՀԱՆՂԵՊ



31 տարբեր դասարանների աշակերտներ սիրով, բարձր տրամադրությամբ էին ընդգրկվել միջոցառմանը եւ դրսևորեցին վրաց լեզվի պատշաճ իմացություն: Աշակերտները ներկաներին մատուցեցին զեղեցիկ ասմունք, երգ ու պար: Խոսեցին վրաց լեզվի կարեւորության ու նրա զարգացման շուրջ: Զուգահեռաբար, էկ-

եր նաեւ նուրբ հունորային բեմականացմամբ: Միջոցառումը արժեւորեցին դպրոցի տնօրեն Արչիլ Զխաիծեն, ուսմասվար Հասմիկ Պապիկյանը, տողերիս հեղինակը՝ ընդգծելով, որ վրացերենը երեխաների համար հարազատ լեզու է եւ իր ուրույն տեղն ունի նրանցից յուրաքանչյուրի կյանքում:

Վրաց լեզվի օրվա առիթով՝ մայրաքաղաքի թիվ 103 հանրային դպրոցի հայկական մասնաճյուղում, մեծ շուքով ու մարդաշատ մթնոլորտում, կայացավ «Լեզուն է ազգի մայրը» խորագրով միջոցառում: Այն կազմակերպել էին դպրոցի ուսուցչուհիներ Դայի Փեղերիշվիլին, Մարինա Գուգուշվիլին, Նինո Օթթալիձեն:

րանին ցուցադրվում էին վրացերենի նմանակա՝ Նշենք, որ գրական-զեղարվեստական կոմպոզիցիան համեմատված

Վերջում նշենք նաեւ, որ նման միջոցառումներ տեղի ունեցան նաեւ Ախալքալաքի եւ Նինոծմինդայի դպրոցներում: Այդ օրը այդ դպրոցներում հյուր էին ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցի ղեկավարները՝ տնօրեն Քեթի Մախարաշվիլու գլխավորությամբ:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Վրաստանի ԿԳՆ ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ վարցալեզու դպրոցներում ուսումնական նյութերի ներդրման փորձագետ

ԲՈՆՑՔԱՄԱՐՏ

ԱՄՍԼՔԱՄԱՐՔԻ ՕԹԱՐ ԵՐԱՆՈՍՅԱՆԸ՝ ՄԻՋԱԳԱՅԻՆ ԽՈՇՈՐ ՀՈՒՇԱՄՐՅԱՆՈՒ ՀԱՂԹՈՂ

Եզրագիծը հատեց բռնցքամարտի՝ Դավիթ Կվաճաձեի անվան միջազգային խոշոր հուշամրցաշարը, որին մասնակցում էին Վրաստանի, Հայաստանի, Ռուսաստանի, Ադրբեջանի, Իսրայելի, Ուկրաինայի եւ Իրանի շուրջ 120 մարզիկ:

Նշենք, որ բոլոր տասը քաշային կարգերում վրաց բռնցքամարտիկները ունեին մրցաշարի հաղթող դառնալու հնարավորություն, թեպետ ուժեղագույնի կոչումը նվաճեցին միայն 5 քաշային կարգերում:

Վրաստանի վաստակավոր մարզիչ, Ախալքալաքի մարզահամալիրի տնօրեն Ատոմ Էլիզբարյանի սանը, Եվրոպայի եռակի փոխչեմպիոն եւ Վրաստանի յոթակի չեմպիոն Օթար Երանոսյանը 60 կգ քաշային կարգում համոզիչ հաղթանակներով նվաճեց ուժեղագույնի կոչումը:

Մրցաշարի հաղթողներ դարձան նաեւ՝ 49 կգ քաշային կարգում Նո-

դար Դարբաիձեն, 56 կգ քաշային կարգում՝ Սեւերիան Երիաձեն, 81 կգ քաշային կարգում Յագոր Կիզիրիան, 91 կգ քաշային կարգում Ալեքսանդր Դոկվաձեն:

Մրցաշարի հաղթողներ դարձան նաեւ հայաստանցիներ 52 կգ քաշային կարգում Վաչե Բադալյանը, 64 կգ քաշային կարգում՝ Հովհաննես Բաճկովը, 75 կգ քաշային կարգում՝ Արմեն Դարչինյանը, Վիկ Դարչինյանի զարմիկը:

Թիմային հաշվարկում առաջին



տեղը զբաղեցրեց Վրաստանի հավաքականը, երկրորդ եւ երրորդ տեղերը զբաղեցրին, համապատասխանաբար, Հայաստանի եւ Ռուսաստանի թիմերը:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

	1		2		3		4		5		6
7					8		9				
				10							
11		12					13	14		15	
	16				17						
				18				19		20	21
22			23				24				
			25		26						
27	28						29		30		31
					32						
33		34							35	36	37
	38					39		40			
				41	42		43				
44	45		46		47				48		49
	50						51				52
	53				54				55		

Խ Ա Չ Բ Ա Ռ

ՀՈՐԻՉՈՍԱԿԱՆ. 7.Թուրքական կեռ թուր: 9.Գարնան ամիս: 10.Արտաքին կերպարանք: 11.Կաթ ուտող, ծծկեր: 13.Խաղաթուր: 16.Աղոթք «... Մարիա»: 17.Գետ Գերմանիայում: 19.Ֆինանսական եկամուտների եւ ծախսերի պլան, որը սահմանվում է ճշգրիտ ժամանակահատվածի համար: 22.Սապատավոր, կորամեջք: 24.Պլան, նախագիծ: 25.Ինքնավար հանրապետություն ՌԴ-ում: 27.Ռուսական էստրադային երգչուհի: 29.Մեքսիկական ծագումով ամերիկացի դերասան, գրող եւ նկարիչ ... Քուին: 32.Ամերիկացի դերասանուհի եւ երգչուհի ... Մինելի: 33.Քաղաք Բուխվիայում: 35.Փշերով պատված, տատասկոտ: 38.Սլավոնական ազգ: 40.Ուրբի հարված: 41.Ինքնատիպ արտաքին: 44.Նրանք-ը՝ արեւմտահայերեն: 47.Ճապոնացի նշանավոր արձակագիր եւ դրամատուրգ ... Կոբո: 48.Դերձակի գործիք: 50.Ամերիկյան դերասանուհի Լեյտոն ...: 51.Միասնական վրաց լեզուների ընտանիքի պատկանող կենդանի: 52.Մեքսիկյան այլուրեքի տառ: 53.Թբիլիսիում ծնված խորհրդային երգիչ ... Հովհաննիսյան: 54.Փղերիկ եղեգնյա սրինգ: 55.Կարծես:

ՈՒՂԱՄԱՅՈՒՆ. 1.Ձբոնամալ: 2.Շախմատում գրոհ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻՉՈՍԱԿԱՆ. 1.Ձիվանի: 4.Ապինյան: 10.Աշոտ: 11.Առարկա: 12.Արյուն: 13.Կակալ: 14.Ան: 16.Դիւ: 17.Իվան: 19.Նարդի: 21.Կարդա: 22.Ավո: 23.Իորի: 26.Դանթ: 28.Սա: 30.Անդ: 31.Թամար: 32.Ծամել: 35.Համո: 37.Քվե: 40.Կաքավ: 41.Սիս: 43.Կակո: 44.Ան: 45.Արա: 46.Թադետ: 48.Ար: 49.Դավ: 51.Արիս: 52.Լուր: 56.Իր: 57.Մետաքսյա:

ՈՒՂԱՄԱՅՈՒՆ. 2.Իրան: 3.Արկարի: 4.Աշակերտ: 5.Պո: 6.Իտալիա: 7.Յայլա: 8.Նինվե: 9.Կապան: 13.Կեկել: 15.Նանի: 18.Նովենց: 20.Դար: 22.Աթա: 24.Որակ: 25.Իսահակ: 27.Ալեքսանդր: 29.Արաք: 32.Ծովինար: 33.Լիլո: 34.Ծերեթելի: 36.ՄԱԿ: 38.Ես: 39.Շագալ: 42.Նոդար: 45.Ավագ: 47.Սոսե: 50.Ափ: 51.Այս: 53.Ուր: 55.Որ:

Խմբագիր՝
ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
«VRASTAN»
Georgia, Tbilisi
Индекс 66445